ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Այս տարի էլ Մայր Աթոռում ավանդական հանդիսությամբ նշվեց առաջին մարտիրոս ս. Ստեփանոսի տոնը: Մայր Աթոռի միաբան սարկավագները և հոգևոր ճեմարանի ուսանողները բացառիկ խանդավառությամբ կատարեցին իրենց մտատիպարի՝ ս. Ստեփանոսի տոնին նվիրված երգեցողությունները:

«Սուրբ Ստեփաննոս այր լի հաւատով Հոգւով Սրբոց շնորհօք և զօրութեամբ»:

Դեկտեմբերի 25-ին, ուրբաթ օրը, երեկոյան, Մայր տաճարի կամարների տակ, նախատոնակի ժամանակ, թնդաց ս. Ստեփանոսի գեղեցիկ շարականը՝ «Նահատակ բարի»-ն:

Այս տարի ս. Ստեփանոսի տոնը առիթ հանդիսացավ հոգևոր այլ բերկրանքի: Հոգևոր ճեմարանի Գ. լսարանի բոլոր ուսանողները դիմում էին ներկայացրել Վեհափառ Հայրապետին ստանալու սարկավագական աստիճան: Ազգիս Վեհափառ Հայրապետը, հարգելով միջնորդությունը Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի և հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Շնորհք վրդ. Գասպարյանի, արտոնել էր ս. Ստեփանոսի տոնին սարկավագական ձեռնադրություն:

Ուրբաթ օրը, երեկոյան ժամերգության ավարտին, հինգ ընծայացուներին շնորհվեց կիսասարկավագի աստիճան՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի:

Դեկտեմբերի 26-ին, շաբաթ օրը, Մայր տաճարում պաշտվում է առավոտյան ժամերգություն: Սարկավագները և ժառանգավորները խորը ապրումով կատարում են օրվա հատուկ մասնավոր շարականներն և երգերը:

Վեհ. ու տպավորիչ հնչում է «Այսօր դասք»-ը, «Ստեփանոս, քաղցրիկ տատրակ», որը կատարում է սարկավագների խումբը, սաղավարտ ի գլուխ, բուրվառ ի ձեռին, մետաքսահյուս գեղեցիկ շապիկներ հագած:

Ժամերգության ավարտին լուսարարապետ Հայկազուն սրբազանը կատարում է սարկավագական ձեռնադրության խորհուրդը: Այնուհետև ձեռնադրիչ սրբազանը խրատական է խոսում՝ բնաբան ընտրելով Պողոս առաքյալի՝ առ Տիմոթեոս Բ թղթի հետևյալ խոսքերը. «Փութասջիր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ մշակ առանց ամօթոյ, ուղիղ համառոտել զբանն ճշմարտութեան» (Բ 15): Օրվա պատարագիչն է տ. Հովհաննես քհն. Մարուքյանը: Սեղանին սպասարկում են նորապսակ Տրդատ, Ժի-

բայր, Արտաշես, Սեզար և Կորիճ սարկավագները:

Այս առիթով Հայկազուն արքեպիսկոպոսը սարկավագական աստիճան է շնորհում սպագա երկու քահանայացուների՝ Տիգրան Հարությունյանին և Թորոս Մարգարյանին:

Հավարտ ս. պատարագի Հայկազուն արքեպիսկոպոսի գլխավորությամբ Մայր Աթոռի ողջ սարկավագական խումբը, 13 հոգի, գնում է Վեհարան՝ ստանալու Հայոց Հայրապետի օրհնությունն ու պատգամը: Հայոց Հայրապետը, հոգեպես ուրախ, ջերմորեն ընդունում է Իր հոգևոր զավակներին, շնորհավորում նրանց տոնը և բարեմաղթում, որ Մայր Աթոռի երիտասարդ սարկավագներն արիանան ու լցվեն ս. Ստեփանոսի ոգով, հավատքով և զորությամբ՝ արժանապես կատարելու համար հոգևոր սպասը Հայաստանյայց եկեղեցուն և հայ ժողովրդին:

Մայր Աթոռի սարկավագների խումբը աջահամբույրով ստանում է Հայոց Հայրապետի օրհնությունը և մեկական Նոր Կտակարան՝ վերջերս Մայր Աթոռի տպարանում հրատարակված:

Այնուհետև, ժամը 15-ին հոգևոր ճեմարանի սեղանատանը, ի պատիվ Մայր Աթոռի սարկավագների տոնի, տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում են հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, բոլոր հերկաները հյուրասիրվում են հայկական ավանդական հարիսայով և քաղցրավենիքներով:

Ճաշկերույթի ժամանակ սարկավագների տոնը շնորհավորում են տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, տեսչի պաշտոնակատար տ. Հովհաննես քահանան, դասախոսներ Արթուն Հատիտյանը, Կամսար Ավետիսյանը, Պարգև Շահբազյանը, Սամվել Անթոսյանը, Սիմոն Հովիվյանը:

Հանուն սարկավագաց խմբի Վեհափառ Հայրապետին, տեսչական ու դասախոսական կազմին ուղղված երախտագիտական հետևյալ ջերմ խոսքով հանդես է գալիս Արտաշես սրկ. Մուշեղյանը.

«Նորընտիր սարկավագ եղբայրներիս և իմ անունից երախտագիտական և շնորհակալական խոսք ունեմ հայտնելու նախ ազգիս Վեհափառ Հայրապետին՝ Իր հայրական հոգատարության և մեզ պատճառած այս ուրախության համար, մեզ ձեռնադրող տ. Հայկազուն արքեպիսկոպոսին՝ իր շնորհաբաշխության համար, ճեմարանի տեսչությանը, տ. Շնորհք վրդ. Գասպարյանին, տ. Հովհաննես քհն. Մարուքյանին, որ մեզ հնարավորություն տվեցին աստիճան առ աստիճան բարձրանալ ճեմարանում և հասնել սարկավագության կարգին, դասախոսներին, որոնք հոգևոր ճեմարանի իմացական այուններն են հանդիսանում և մեր մտքի ու հոգու շինարարները:

Մենք գիտակցում ենք մեր ձեռնադրության ճշմարիտ արժեքը: Սրբազան Հայր, Դուք Ձեր շնորհաբաշխությամբ ներշնչեցիք մեզ միսիթարիչ ս. Հոգին և դյուրացրիք անսատույց լույսին հասնելու մեր ուղին, բացեցիք դեպի հոգևոր ծառայություն տանող այն ճանապարհը, որին մենք անհամբերությամբ ձգտում էինք հասնել: Իմ ընկերները և ես սիրեցինք հոգևոր կյանքի այս ճշմարիտ ճանապարհը. խոստանում ենք առաջիկայում անշեղորեն ընթանալ այդ ճանապարհով, որը Քրիստոսի քաղցրիկ տատրակ ս. Ստեփանոսի նահատակության պսակով է նվիրագործված: Առաջ մենք ունեինք տղայական, անհոգ կյանք, բայց այսօրվանից թողնելու ենք ամենը և հարսի հոգով, ըստ շարականագրի, դառնալու ենք «աշակերտք Քրիստոսի»: Մենք մեր նոր կյանքի ճանապարհի սեմին տեսնում ենք և հասկանում մեր կոչման և ասպարեզի դժվարությունները ու պահանջները:

Մենք ինչով կարող ենք նմանվել ս. Ստեփանոսին. նախ՝ մաքրակենցաղ ու առաքինի կյանքով, երկրորդ՝ այն անոխակալ ոգով, որ հատուկ էր ս. Ստեփանոսին: Երբ քարկոծում էին նրան՝ նա աղոթում էր քարկոծողների համար. «Տէր, մի համարիր դոցա զայս մեղս»: Այս վանք կեցվածքի մեջ մենք տեսնում ենք աստվածային նկարագիր, քրիստոնեական արիություն ու հավատի կրակ:

Մեր կոչումը ճշմարիտ, նվիրական է. Աստված մեզ կանչել է խորհուրդների խորան այս սրբություն սրբոցը, ուր մենք կոչված ենք փառաբանելու Նրան: Այսօր արդեն մեզ զգում ենք ձեռնադրված և շնորհազգաց: Պետք է խոստանանք, որ մեր սարկավագությունը միայն զգեստ չպետք է լինի: Երբ առաքյալները ընտրեցին առաջին յոթ սարկավագներին, նրանք սև զգեստ չէին կրում: Նրանք Աստուծո ուխտավորներն էին, Մենք էլ մեր մտատիպարի օրինակով նախ հոգով սարկավագ զգանք մեզ, սրտով հավատանք և ապա լեզվով խոստովանենք:

Մենք կոչված ենք քահանայության: Արդեն առաջին հաստատ քայլն արված է. եկեղեցուց սկսեց մեր հոգևոր վերածնունդը՝ ավազանից հետո:

Սիրելի հոգևոր հայրեր և ուսուցիչներ, Ձեր պատվերները նվիրական են մեզ համար: Ս. Լուսավորչի հավատի այն ջանը, որ դարերի ընթացքում մեր եռամեծ վարդապետների ձեռքում իմաստավորվել է, մեզ եր ավանդում այսօր. պիտի պահենք մեր նախնյաց հավատքի և սրբությունների ջանը և նրանով մենք էլ բարձրանանք:

Այժմ անմոռաց պահեր ենք ապրում, ինչպես Դուք, Սրբազան Հայր, չեք մոռացել Ձեզ սարկավագ ձեռնադրող հոգելույս տ. Եղիշե պատրիարք Դուրյանին, մենք էլ չենք մոռանա այս սրբազան պահը, մեր պայծառակերպության Թափոր լեռը: Շնորհակալություն ենք հայտնում այն վստահության համար, որով մեզ արժանի համարեցիք բարձրացնելու մի աստիճան ևս առ Աստված:

Այս սիրո սեղանը մեզ ճշմարիտ ուրախություն է պատճառում. Աստված մեր մեջ է և հիմա՝ այստեղ հոգևոր գարուն է մեզ համար:

Ինչպես որ միասիրտ և միահոգի ձեռնադրվեցինք, այնպես էլ միասիրտ ու միահոգի պետք է ծառայենք:

Թող մեր աղոթքները ուղիղ լինեն և սրտերը՝ մաքուր»:

Ս. Ստեփանոսի տոնի առթիվ ձեռնադրված սարկավագներն են.

1. **Արտաշես սրկ. Մուշեղյան:** Ծնվել է 1947 թվականին Երևանում: 1966 թվականին ավարտել է միջնակարգ դպրոցը: 1967 թվականին ընդունվել է Էջմիածնի հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է ավարտական լսարանում:

2. **Սեզար սրկ. Գոնտրայյան:** Ծնվել է Հալեպում, 1949 թվականին: Մի քանի տարի սովորել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում: 1969 թվականին ընդունվել է Էջմիածնի հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է ավարտական լսարանում:

3. **Տրդատ սրկ. Շամլյան:** Ծնվել է Հալեպ քաղաքում, 1949 թվականին: Մի քանի տարի սովորել է Երուսաղեմի Թարգմանչաց վարժարանում: 1966 թվականին ընդունվել է Էջմիածնի հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է ճեմարանի ավարտական լսարանում:

4. **Ժիրայր սրկ. Սիմոնյան:** Ծնվել է Ալթայի երկրամասի Մաքսիմովկա գյուղում, 1951 թվականին: 1958 թվականին սովորել է Էջմիածնի, 1961—1964 թվականներին՝ Երևանի միջնակարգ դպրոցներում: 1965 թվականին ընդունվել է Էջմիածնի հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է ավարտական լսարանում:

5. **Կտրիճ սրկ. Ներսիսյան:** Ծնվել է 1951 թվականին Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: 1965 թվականին ընդունվել է Էջմիածնի հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է ավարտական լսարանում:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Մայր Աթոռի սարկավագների տոնը և, հանուն բազմահարուր իր ընթերցողների, բարեմաղթում, որ նրանք լինեն արժանավոր զավակներ Մայր Աթոռի և հավատավոր սպասավորներ՝ հայ եկեղեցու: